ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/157

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2022թ. թիվ 26/26-1/7347-2022 գրությամբ «Ջուզեպպե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 19.04.2022թ. թիվ 01/584-22 գրության հիման վրա, 26.04.2022թ. թիվ 26/26-1/7347-2022 գրությամբ նախաձեռնել է գրությամբ «Ջուզեպպե» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ջուզեպպե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ջուզեպպե» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ջուզեպպե» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/157 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.04.2022թ. թիվ 01/584-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/87» ծածկագրով, էլեկտրոնային աճուրդի միջոցով, կազմակերպված «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար կենցաղային ապրանքների ձեռքբերման գնման գործընթացի 2,4,7-12, 14 և 15 չափաբաժինների համար ամենացածր գներ էր առաջարկել «Ջուզեպպե» ՍՊԸ մասնակիցը, սակայն նա համակարգին չէր կցել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (հավելված 1.2 կամ 1.3), դիմում-հայտարարությունը լրացրել էր սխալ (բացակայում էր նաև էլեկտրոնային ստորագրությունը), չէր ներկայացրել իր առաջարկների տեխնիկական բնութագրերը, ապրաքների ապրանքային նշանները, արտադրող ֆիրմաների անվանումները(համապատասխան ֆայլերը ներկայացվում են գրությանը կից): 08.04.2022թ-ին «Ջուզեպպե» ՍՊԸ–ին, համակարգի միջոցով, տրվել էր, օրենքով սահմանված ժամկետում, դիմում-հայտարարության շտկման հնարավորություն, սակայն «Ջուզեպպե» ՍՊԸ-ն չներկայացրեց իր առաջարկների շտկված տեխնիկական բնութագրերը:

Ելնելով վերոգրյալներից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 2, 4, 7-12, 14 և 15 չափաբաժինները համարել չկայացած և առաջարկել «Ջուզեպպե» ՍՊԸ մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/157 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/87» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Ջուզեպպե» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2022թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջուզեպպե» ՍՊԸ-ն համակարգին չի կցել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (հավելված 1.2 կամ 1.3), դիմում-հայտարարությունը լրացրել է սխալ, նաև բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը, չի լրացրել 2, 4, 7, 8, 9, 10, 11, 12, 14 և 15 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև լրացված չեն ապրանքների ապրանքային նշանները, ֆիրմաների անվանումները և արտադրողները:
3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 08.04.2022թ. «Ջուզեպպե» ՍՊԸ-ին համակարգի միջոցով տրվել է դիմում-հայտարարության շտկման հնարավորություն և Ընկերությունը օրենքով սահմանված ժամկետում համակարգին է կցել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (հավելված 1.2) և դիմում-հայտարարությունը: Սակայն, մասնակիցը չի լրացրել 2, 4, 7, 8, 9, 10, 11, 12, 14 և 15 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, ապրանքների ապրանքային նշանները, ֆիրմային և արտադրողի անվանումները:
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված դրույթով, 19.04.2022թ. թիվ 01/584-22 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.04.2022թ. թիվ 26/26-1/7347-2022 գրությունը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 19.04.2022թ. թիվ 01/584-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից

ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

<u>Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/87» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Ջուզեպպե» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2022թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջուզեպպե» ՍՊԸ-ն համակարգին չի կցել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (հավելված 1.2 կամ 1.3), դիմում-հայտարարությունը լրացրել է սխալ, նաև բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը, չի լրացրել 2, 4, 7, 8, 9, 10, 11, 12, 14 և 15 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև լրացված չեն ապրանքների ապրանքային նշանները, ֆիրմաների անվանումները և արտադրողները:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 08.04.2022թ. «Ջուզեպպե» ՍՊԸ-ին համակարգի միջոցով տրվել է դիմում-հայտարարության շտկման հնարավորություն և Ընկերությունը օրենքով սահմանված ժամկետում համակարգին է կցել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (հավելված 1.2) և դիմում-հայտարարությունը: Սակայն, մասնակիցը չի լրացրել 2, 4, 7, 8, 9, 10, 11, 12, 14 և 15 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, ապրանքների ապրանքային նշանները, ֆիրմային և արտադրողի անվանումները:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված դրույթով, 19.04.2022թ. թիվ 01/584-22

գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2022թ. թիվ 3 արձանագրությունը, հարկ եմ համարում արձանագրել, ***<u>որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրելով այն փաստը, որ «Ջուզեպպե» ՍՊԸ-ի կողմից շտկումները կատարվել են մասամբ, առանց Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, 19.04.2022թ. թիվ 01/584-22 գրությամբ Ընկերության տվյալները՝ կից փաստաթղթերով, ներկայացրել է լիազորված մարմնին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:</u>***

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ջուզեպպե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2022թ. թիվ 26/26-1/7347-2022 գրությամբ «Ջուզեպպե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**